

Օգոստոսի 20-ին Բաղէլում՝ արքեցութեան դէմ մաքառելու միջազգային ժողով կգումարուի։ Յահճամաքովը հետևեալ կանոններն եւ որոշել ժողովի ընթացքի վերաբերութեամբ։ Ժողովի նպատակն է քաղաքական և կրօնական ձգումներից միանդամայն չէզոք՝ մտքերի աղաս փոխանակութիւն ունենալ ոգելից խմբչքների չարաշար գործածութեան դէմ և այդ չարիքի դէմ մաքառելու միջոցներ գտնել։ Ագելից խմբչքների չափաւոր գործածութեան կողմնակիցները և ժուժկաները հաւասարապէս իրաւունք ունին մասնակցելու ժողովին։ Վիճաբանութեան իրաւունքից զրկուած են այն անձնաւորութիւնները, որոնք շահամղական գիտութեան կամ կամաց այդ արդիւնաբերութեան մասին։ Վիճաբանութիւնը կարող է գերմաներէն, անգլիերէն, ֆրանսերէն կամ իտալերէն լինել։

Արքեցութիւնը ճշմարիտ մի միջազգային ախտ է և միանգամայն նախատակայարմար է միջազգային խորհուրդներ կազմել այդ ախտի դէմ մաքառելու համար։ Գերմանիայում և Անգղիայում երկու տեսակ հաստատութիւններ կան գորա դէմ մաքառելու. ա) հարակ էնթեր շնէրլանցութեան և բ) արքեցութեան դէմ առաջարկած առաջարկ (Trinkasyl)։ Եկեղեցին մեծ մաս ունի այդ հաստատութիւնների մէջ և կարելի է ասել Գերմանիայում, համարեա առանց բացառութեան, այդ հաստատութիւններն ու ընկերութիւնները պաստորների հովանաւորութեան ներքոյ են։ Շատ պատորներ կամար հրաժարուում են խմբչքներ գործածելուց իրենց՝ համայնքին ժուժկալութեան օրինակ ընծայելու համար։

Զախօս թուզը փաշան նեղոսի նովուում՝ լուսորի մօտ, նորերս մի սալաքար է գտել եգիպտական արձանագրութեամբ, ուր պատմուած է, թէ նեղոսը եօթ տարի իւր ափերից չի գուրս եկել, դաշտերը անպտուղ են մնացել, որից և զարհութելի սով է ծագել։ Արձանագրութեան մի քանի ցուցմունքներից երեսում է, որ այս դրութիւնը 1900 թ. Ք. ա. պիտի գրուած լինի, որով և մանգամայն համապատասխանումէ Յակորի որդիների Խղիպոս դաղթելու և Յովուէիի փոխարքայութեան ժամանակին։



ԴՐԱԿԱՆՆԵԿԱՆ—ՊԵՏՄԱԿԱՆ

Սովոր կաղանկատուացոյ Աղուանից պարագաներու մութեան Մայր Աթոռ մատենակարանում՝ գտնուած ծեռազիր օրինակները։

(Սուաջին խումբ :

Ն 1 օ օ 2

Հայոց 21. թ. = 1289 Փրկչական թ.-ից։

Անուն՝ Պատմութիւն եկեղեցական Սոկրատայ և պատմութիւն Աղուանից, Նիւթ թղթեաց, Կազմակերպ, Կաշիսպատ, Ներսից ներկած կտաւով պատաճ, Հայութաց, Լուսանցամդղթերից կտրտած, Կարկատած, միջից և վերջից պակաս տեղերը նորոգած լրացրած, Առանց մագաղաթեայ պահպանակի, Դատարկ թ. 86 երկրորդ երես 1 սիւնեակի շատ կէսը և թ. 187 երկու երեսը, Սկզբից չորս թուղթ պակաս, միջից մի այն է 187 թ. Մեծութիւն՝ 33 × 48 սմ. Թուղթը 377։ Գրութիւն 12 × 39, երկսիւն խոշոր բոլորազիր, նման երկաթազրի, Տողք՝ 31—32։

Վերնագիրը խոշոր երկաթազրով սկզբնատառք նոյնպէս, Աչ մանրանկարք, ոչ լուսանցքազրիք և ոչ էլ խորանազարդք ունի. Ստացող՝ Տէր Համազասպ եպիսկոպոս առաջնորդ Յովհաննու վանաց, Գրիչ անցայտ, Նորոգած թղթեր՝ 343, 351, 352, 374—377, Փամանակ 21. թ.—21. թ. 1288—1289 թ. տես թուղթ 306։

Կազմով և նորոգող՝ Ծթանաս զրիչ Ռ. Ճ. թ. = 1676 թ.-ին, Տեղ՝ Յովհաննու վանք Կարրու։

Կտրտած լուսանցքամդղթեր և նորից կարկատած թուղթ՝ 20, 22, 24, 25, 26, 29, 30, 31, 33, 45, 46, 56, 66, 68, 69, 84, 85, 89, 94, 95, 96, 97, 98, 104, 106, 108, 109, 110, 113, 118, 125, 128, 130, 142, 144, 145, 146, 158, 161, 163, 165, 166, 168, 169, 170, 171, 172, 173, 195, 198, 204, 214, 223, 226, 234, 275, 289, 301, 312, 313, 244, 349, 353, 363։

Տէղեկութիւնը բովանդակութեան և յիշատակադրութիւնը մատենիս։

ԹՈՒԴ. Թ. 1 ...

«Ամենայն քաղաքաց վատթար ևս լինէր շարը...» Առաջին գրքից—հատուածից կամ հատորից,



չորս թերթ պահանջման է մինչև շամենայն քաղաքաց ևն. ևն.:

Թ. 119. թ. 32 սիւնեակ:

«Եւ ունին զիրքս ժամանակաց Ա.Ա. Զատացող գրոցս յիշեսջիք ի Քրիստոս»:

Սիւնեակ Հատոր:

«Ուռուփինոս որ հռովմանցոց լեզուովն զրեաց «զեկեղեցականն պատմութիւն» առ ժամանական մոռ «Լորեցաւ»:

Թ. 72 սիւնեակ:

«Եւ եկաց Կոստանդիոս ամս քառասուն և հինգ. Թագաւորեաց ամս 1. և ուժ. Ընդ Հաւըն թագաւորեաց ամս Ժ. և Գ. Խոկ յետ վախճանի նորա ամս Ի. Որբանեաց աղաջաւ և զիրքս ունին ժամանակ»:

Սիւնեակ Հատոր «գ»

«Կոստանդիոս թագաւոր. ի սահմանն Ախուլիկոյ երիցն նոյեմբերի ամսոյ առ Հիւպատոսութեաւուուիւ և վղուէնտիոսիւ կատարէր զվարսն»:

Թ. 74:

«Քոլորագիր և այլ գրչով գրած. ներքեւի լուսանցքագիրը զգրիգոր՝ «աշակերտ թոթկայ որ զեւ «մըս գրեցի յաղաւմս յիշեցեք նայ և գուք ան «մոռաց լիցիք առաջի Ա.»»:

Թ. 97:

«Ներքեւի Լուսանցքագիրը «եղուկ քունս նեղշեաց և վիշտո յաւելու կամի»»:

97 սիւնեակ:

«Ունին զիրքս ժամանակաց երկուց և ամսոց երից և կիսոյ»:

«Նոյն սիւնեակ Հատոր «գ»՝ «թագաւորին յուրիհանսի ի դատաստանս որպէս ասացաք վաղձանեալ յիւրում Հիւպատուցն և բառիանու որդուոյ նորուն տասն եւ եթանն վետրուարի ամսոյ»:

Թ. 120:

«Ներքեւի Լուսանցքագիրը՝ «Աւաղ գառն ցաւ որ զիպա և խափանեցաւ զիրսոս վասն զի առտամն ցաւեցաւ զաւուրս եւթն նա և զլուխս այլ և տէր կարողացոյց»»:

Թ. 123 սիւնեակ:

«Ունին զիրքս ժամանակաց Ժ.Զ. Զառաջնորդ գրոցս զարազան եպիսկոպոսն զտէր Համազասապ «յիշեսջիք ի Ք.Ն և զդրիգորէս կրաւեաւոր»»:

Սիւնեակ Հատոր «Ե»

«Նախ քան զսկանել մեղ զպատմութիւնս

«Հինգերորդի գրոցս ասասցուք առ Հանդերձ և եալսն ընթեռնուլ զմեր ստորագրութիւն. մի մեռ «զագրել մեղ եթէ նախկին եղեալ զեկեղեցական «պատմութիւն նշանագրել խառնեցաք ի նա եւ ըստ ժամանակին եղեալ պատերազմունսն »:

Թ. 131:

«Ներքեւի Լուսանցքագիր. «Աւաղ քունս նեղեաց զիս»»:

Թ. 149 սիւնեակ:

«Ունին զիրքս ժամանակաց Ժ.Զ. Եւ ամսոց ութիւն «Աստանաւոր յիշեսջիք զարրազան եպիսկոպոսն զտէր Համազասապ, ընդ նմին եւ զդրիգորէս կրաւեաւոր. եւ զիս զանարժան գրչողս ի Ք.»»:

Սիւնեակ:

(Նոր զլուխ) «Զ.Հրամանդ քո քահանայդ Աստուծոյ այրդ Թէոդորէ, ի հնդեսին առաջարկեալ զիրսն որպէս էր վարկանիլ, Խորհրդիւ վաստակեցաք, զոր ի կոստանտն ի ժամանակացն եկեղեցական պատմութիւն շարագրեալ.ք»»:

Թ. 172 սիւնեակ:

«Խոկ թողեալ (Արկադիոսի) թագաւորելով «զորդին Թէոդոսիոս Ը. ամեա հանդիպելով վաղձանեցաւ ի հեւպատուցն բասսոսի, եւ փիլիպոսու յառաջումն մայիս ամսոյ: Խոկ այս էր ամ երկրորդ, ՄՊ.Ե. Աղիմպիատումն. թագաւորեալ ընդ հարսն ամս Ժ.Գ. Խոկ յետ վաղձանի հաւըն ամս Ժ.Գ. կեցեալ ամս Ա.Ա. Զառաջնորդ գրոց զարրազան եպիսկոպոսն զտէր Համ»» եւ զդրիգորէս կրաւեաւոր յիշեցէք ի Ք. եւ զմեղազարտ գրիչս» առ դաշեմք»»:

Սիւնեակ:

(Նոր զլուխ) «Թագաւորին Արկադիոսի վաղձանեալ յառաջնումն մայիս ամսոյ ի հիւպատուցն բասսոսի և փիլիպոսի, Խորիս նորին եղային զարձմանայր ուղղէր կողմուն»»:

Թ. 205 սիւնեակ:

«Զենին ի վերայ արկեալ Պրաւելի, փոխանակ էպարքութեանն եպիսկոպոս Վէսարու յայտնեաց. այլ որ ինչ ըստ եկեղեցեացն այսպէս յառաջադիմանայր յայնժամ»»:

205 սիւնեակ:

«Բայց մեր աստանաւոր ուրեք զպատմութիւնս դագրեցնեալ՝ ի խաղաղութեան կեալ զորս ամեռ նայն ուրեք եկեղեցիս եւ քաղաքս եւ աղդ աղաւեթոցուք քանզի փրկչին մերոյ Տեառնն Յիսուսի Քրիստոսի խաղաղութեան եղելոյ ոչ ունիցին

պատճառք, որբ պատմութիւնս գրել կամելով։ Զի իւ մեք, ովք քահանայքդ Աստուծոյ մարդդ Թէոդորէ, զիրամանդ քո յեւթնեսեան զիրսն արտատարածելով, ոչ արդեւք տարակուսեալ էաք պատճառոյ, եթէ սիրաւղքն զիսովութիւնս լոել յաւժարէին, եւ ոչ գործ շարամանեալ։ Անի է. պատմութիւնս ժամանակաց Լի։ Խոկ ամենայն էթ տոմիս պատճառս ունի ժամանակ ամաց ձև։ սկըսեալ յառաջին ՃՀՆ. ողիմպիադացն, յորում յորջյորջաւոր թագաւոր Կոստանտինոս։ Խոկ գագարեալ յերկրորդ ամին ՅԵ. ողիմպիագում։ յորում ԺԵ հիւպատին թագաւորին Թէոդոսի տուեալ Իւնը։ «յիշեա Քրիստոս Աստուած զստացաւ դրոց եւ զաւալնորդ սորա և զգրչողս»։

Թ. 206 սիւնեակ ա.

«Յառաջ քան զութուտասն ամի թարգմանելոյ Փիլովի զգիրսդ զայդ Սոսկրատայ զէկեղեցական պատմութիւն՝ թարգմանել էր Երասուն Գրիգորի Զորոյփորեցոյ թարգմանի, ընդ փառաւորս յիշելոյ, Ներսէ հի վրաց իշխանին փեսային կամսարականաց, զգիրս պատմութեան վարուց սրբին Սեղբեստոսի էսիկոպոսին հռովմայ, եւ կայր ի քարտիսի։ Այժմ պատշաճ համարեցաք առ զմին գրոց գրել։

«Նեւէրիսոս Պամփիղեայն զեկեղեցականն հոմագրելով զպատմութիւն, կրկնակ զայս եթող ստուգել զորաւրինակ եւ յայշն հոմագրութիւն արտաձառեաց. ևլն»

Թ. 211 բ.

Ներքեփի լուսանցքում նօտրագրով «Յիշեցէք զանարժան խաչիկս»։

Թ. 230 սիւնեակ բ.

«Յայսմ հետէ սկսաւ մեծանալ ի կողմանսն հռովմայեցոց անուն Տեառն մերց Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հաւր եւ սուրբ հոգեցն փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից։ Յիշատակութիւն . . . Այս պատմութիւն իմաստախրական ոչ գոլով ի սուրբ մենաստանիս, ի վանս յովշանուու, ես տէր համազասպ բացում փափագանաւք ի խնդիր էի, զի յետ իմ մնացէ ինձ ընձայ, ընդ մեծամեծու, ի սուրբս այս սիովն կաթուզիկէի, Արդ աղաչեմ ըզձեզ մանգունք սուրբ առագաստի, հայցեալ ի Քըրիստոսէ զթողութիւն յանցանաց մերոց, եւ ինձ եղելի զբշի»։

1. Այստեղ վերջանումէ Սոկրատի պատմութիւնը եւ տեղի է տակս Աղուանից պատմութեան։

Շուտով Սոկրատի պատմութեան մի զիրսնական հը-

թ. 231 սիւնեակ ա.
«Նախերգան պատմութեան Աղուանից Առաջն հասուածն զլուիք լ։»

Թ. 235 բ 236 ս.
Սոյն երեսները գեղին ներկ քսած և 236 սիւնեակ բ. ինն տող կեղծած, տողերի տակից քերուածքը նկատելի է։

Թ. 250 ս.

«Ներքեփի լուսանցքում «Վայ քնոյս»։

Թ. 256 բ.

Տակի լուսանցքագիրը «Ախալեցաւ միտքս զի նեղեն զմեզ այլակրանքս թողութիւն արայ, աւաղ ի վրացեաց»։ (նօտրագիր) Ճշմարիտ»։

Թ. 264 բ.

Տակի լուսանցքում նօտրագիր «Ք յիշեցէք զանարժան խաչիկս»։

Թ. 265 սիւնեակ բ.

«Աստանաւր յիշեցիք զրբազան էպիսկոպոսն զտէր համազասպ, որ եղեւ ստացաւ զրոցս. եւ զդրիգորէս կրաւնաւոր, թէ ձար կա և զմեզապարտ զրիչս»։

Թ. 273 սիւնեակ բ.

«Կատարեցան զիրք առաջին պատմութեանս աղուանից»։

«Զատացող զրոցս զերջանիկ էպիսկոպոսն զտէր համազասպ, եւ զեկելի զրիչս յիշեցէք ի Քրիստոս»։

Պատարակութիւն կունենանք չնորին Արժանապատի. Մեսորա վարդապետ Տէր Մովսէսնամցի։ Արդէն երկու տարի է, ինչ որ Հայր Մովորազ ուսումնասիրում է Սոկրատեան ծեռագրերը եւ ներկայում տպագրում է Մայր Աթոռի Տպարանում։ Հրատարակութիւնից յետոյ գորի զիտնական արժէք կզնանատուի՝ թէ որքան հմտութեամբ եւ բարեխըլութեամբ է կատարուած այն։

Օրինիտեղ Հայր Մեսորազ ուսումնասիրութեան առութեան եղած է Սոկրատը, ուստի եւ սոյն ձեռագրի մէջ միայն Սոկրատի երեսնամաթներն էին մտածով նշանակուած և 458, իսկ ձեռագրի Սոկրատից պատմութեան մասը բարձր թողի էր արուած։ Մի թեթեւ նկատողութիւն։ Խնչւէն երեւում է Հայր Մեսորազ շատ թեթեւ է վերաբերուել զէպի այս ձեռագրի ուսումնասիրութիւնը, քանի որ Արժանապատի Հայրը այս հազուազիւն եւ թանգազին ձեռագրը համարել է տասնեւեօթներորդ դարու վերջին քառորդի գործ, մնչդեռ տասներեքերորդ դարու վերջին քառորդին է պատկանում զըլութիւնը, իսկ նորոգութիւնը նորա համարած թուականին։ Երեւի Նորոգութիւնը բարի վրայ նա ուշադրութիւն շի զաւ ձեւեւ ծւ որովհնետեղ Հայր Մեսորազ ստաննած ունի մի ծանր եւ պատասխանառու գործ՝ այն է Մայր Աթոռու Մատենադարանի ձեռագիրների ցուցակը կազմել ուստի բարեկամական նորուուրդ կտամ նորան, զոնէ այսունետեւ մնձ բարեխնամեամբ վերաբերուել զէպի ձեռագիրների ուսումնասիրութեան լուզը եւ խստապահանջ գործը։

Թ. 273^ր սիւնեակ^ա.

«Երկրորդ պատմութիւն արևելից» Աղուանից
Նահանգիս»:

Թ. 306^ր.

«Երեքի լուսանցքի յիշատակագրութիւնը՝
«Աւազ մեծի ազետիս և անմիմիթար սգոյս որ ե-
հ սա աանս զրաց և քրիստոնէից, զի սպանաւ
թագաւորն գեմշտրէ յազգէն նետողաց, ոչինչ մա-
հու պարտական ի սահմի ամսոց, և էր թիւն 21.թ.
Եւ ահայ ի մեծի վանդի կանք, տէր փրկեաւ զմեզ
..... նեղութեանց ամէն. (այս տողը կտրած է
միջից):

Թ. 318^ր սիւնեակ^ա.

«Աստանաւը յիշեսիր զստացաւցս զրցու
զարրանեալ զերշանիկ էպիսկոպոսն զտէր համազ.
ընդ նմին և զիս զողորմելիս»:

Թ. 322.

Այս թղթի երկու երեսի տղագարձութեան սր-
խաները թանաքով սեացըրել են և փորձել են ուղ-
ղել:

Թ. 335.

Միջից ճղուած և հարկատած, ինչպէս և 92
և 93 թերթերը:

Թ. 343.

Այս թերթի առաջին երեսի առաջին սիւնեակը
բոլորագիր է, իսկ մնացեալ երեք սիւնեակները նօտ-
րագիր. պակասը լրացրել են:

Թ. 351 և 352.

Այս երկու թղթերի ութ սիւնեակներում բո-
լորագրով պակասը լրացրել են:

Թ. 353^ր սիւնեակ^ա.

«Երկրորդ հատուած պատմութեան աղուանից»:

Թ. 359^ր սիւնեակ^ա և բ.

Այս երեսում մի տող առաջին սիւնեակից,
եօթն տող երկրորդ սիւնեակից քերել են և տեղը ու-
րիշ բան գորէ:

Թ. 362.

Այս թերթի մէջ 3ս բոլորագրով պակասը լր-
ացրել են:

Թ. 364^ր.

«Երեքի լուսանցքի զիրը՝ «Եղուկ ահս տրր-
դեաց» խնայեա յարարածս քրիստոս աստուած, և
մի ըստ գործոց մերոց հատուացես»:

Թ. 374, 375 և 376.

Այս թերթերի մէջ նմանապէս բոլորագրով
պակասը լրացրել են. միայն 375 թ. երկրորդ երե-
սի բ. սիւնեակում ութն տող քերած և կեղծած է:

Թ. 377^ր սիւնեակ^ա և բ.

«Յիշատակագրութիւնը նորոգման գրոցու որ
են.

թ. Սիւնեակի բոլորագիր յիշատակարանը՝

«Ենորհը և ողորմութեամբ ամենազօրին Աստուծոց
և սուրբ հոգւոյն, եղեւ նորոգումն զրցու որ կոչի
Սովորա և աղուանից պատմագիր. ի թիւն (1676)
Ու և Եւ, յերկրիս Երարատու ի գաւառս Կարբու,
ի գերաչուակ և Տրաչափառ ատառածարնակ սուրբ
մենաստանս յովհաննու վանից ընդ հովհաննեաւ սուրբ
կարապետիս, և սուրբ կաթուղիկէիս, և այլ միայե-
զին սրբոցն, ի բռնակալութեան պարսից Ըահ սուլե-
մանին, և յիշանութեան տանս Երարատեան Սա-
ֆիկուլի խանին երկրորդի, Ի Կաթուղիկոսութեան
սուրբ Էջմիածնի Տեառն Յակոբայ, և առաջնորդու-
թեան սուրբ մանաստանիս Յովհաննէս վարդապե-
տի կարեցոյ, հոգարաքառթեամբ և օժանդակու-
թեամբ նորուն եղեւ նորոգեալ բզգիրը և աւան-
գեցաւ ի գրուն սուրբ կարապետիս. որք օգտիք
ի սմանէ յիշեցէր յազօթս ձեր զառաջնորդ Յով-
հաննէս բարունապետն և զաթուռակալ զգրիգոր
վարդապետն, և զիսլիֆայ զաքարայն, աշխատող
շնացեալ զրցու, և զիս անարժան ամժանաս զրիչս,
և գուք յիշեալ լիջիր ի Քրիստոսէ ամէն»:

Ա. Սիւնեակի Խոչոր նօտրագիր յիշատակարանն
է՝ (1733) թիւն Ուձ2թ յուլիսի Ե. որն Եշպմի-
մեր սուրբ անապատիս Հայր Ջինաղիաց Յովա-
նէս վարդապետ թերինք ի սուրբ ուխտու ետինք սուրբ
կարապետի եկեղեցին. Եշպմի երեկոյի լշոյ մեծ ձա-
գեաց ի վերա գակաղին, մինչև այլազգինքն ևս
տեսին և երանեցին. ուրապաթի ի հող տապանի ե-
զինք նոյն տեղին. Այս լոյսահոգի վարդապետս էր
տեղեաւ աենցի, տարին բօլոր չոր պաս. շպմն
Բշպմն և անգամ Ճաշակիվեր ցամաք հաց, մինչև
յետի տարիին ամինս կամ Խօրն ուտէր հաց. ուր
է այնպէս բերան որ սորա առաքինութիւնն պատմի:
Ի Կաթուղիկոսութիւն սուրբ Էջմիածնի Տեառն
Ապրահամու, և առաջնորդութեան սուրբ ուխտիս
Յակոբ անարժան եղիսկոսոսի, որ է ի յերկրէն
դոխտնեաց ի գեղջեն Ցողնոյ:

Բոլորագիր՝ «Յիշատակէ զիրքս այս սուրբ Էջ-
միածնայ, Ով որ հանէ ի սուրբ Աթոսոյս անիծեալ
լիցի յԱստուծոյ», Այլ զրցով «Յիշատակէ այս զիրքս
սորպ էջմիածնի»:

Այս եղակի և անփոխարինելի ձեռադրեց
ընդօրինակած Աղուանից պատմութեան ձեռագրերն
են. № 632 և 250 և աղագրութիւնը Փարիզ
1860 Կ. Վ. Ծահնազարեանցի և Մոսկվա 1860
Մ. Էմինի հրատարակութեամբ:

Խ. Վ.

(Տարունակելի)